

# ՊՁՏԻԿ-ՄՁՏԻԿ

«ԱՁԴԱԿ»Ի

## ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՅԱԽԵԼՈՒԱԾ



Ա. ՏԱՐԻ

ԹԻՒ 1

ԱՊՐԻԼ 2002

bezdlg\_mezdlg@hotmail.com

### ԱՅՍ

#### ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ

Սիրելի՛ երեխաներ, բարեւ։ Այսօր ուրախալի օր մըն է թէ՛ մեզի եւ թէ՛ ձեզի համար, որովհետեւ լոյս կը տեսնէ ձե՛ր մանկապատանեկան թերթին՝ «Պատիկ-Մպտիկ»ին առաջին թիւը։

Ինչպէս գիտեք, «Ազդակ» արդէն իսկ ունի իր մանկապատանեկան շաբաթօրեայ էջը, որուն առընթեր սակայն «Պատիկ-Մպտիկ»ի հրատարակումը կու գայ լեցնելու կարեւոր բայ մը։ Առայժմ ամսական հերթականութեամբ հրատարակուող «Պատիկ-Մպտիկ»ին մէջ պիտի կարդաք ձեզ հետաքրքրող պանապան նիւթեր, ինչպէս՝ հեքիաթներ, այլապան լուրեր, կենդանիներու աշխարհի, շարժապատկերի, մարզականի եւ ժամանցի բաժիններ, լիբանանահայ մանուկներուն, ձե՛ր եւ ձեր ընկերներուն իրագործումներուն նուիրած սիւնակներ։ Այս բոլորին կողքին մեզ ամէնէն շատ ուրախացնողը այն է, որ այս թերթը պիտի ըլլայ ձերը։ Դուք ձեր գրութիւններուն, գծագրութիւններուն ու նամակներուն ծամբով պիտի կարենաք լսելի դարձնել ձեր ձայնը։ Ասոր առաջին փաստն է թերթին անունը՝ «Պատիկ-Մպտիկ»ը, որ ընտրուեցաւ ձեր կողմէ առաջարկուած բազմաթիւ անուններու մէջէն։

«Պատիկ-Մպտիկ»ի առաջին թիւին պատրաստութեան գործնականապէս մասնակցեցան ինը դպրոց։ Մեր մաղթանքն է, որ այս գործակցութիւնը ոչ միայն շարունակուի, այլեւ ընդարձակուի՝ իր մէջ առնելով լիբանանահայ բոլոր դպրոցները։

Մինչեւ յաջորդ հանդիպում։

«ՊՁՏԻԿ-ՄՁՏԻԿ»

Ձեր գրութիւնները կամ նամակները կրնաք ուղարկել՝ bezdlg\_mezdlg@hotmail.com կամ յանձնել՝ «ՊՁՏԻԿ-ՄՁՏԻԿ»ի խմբագրութեան, «ԱՁԴԱԿ» «Ճաղկոյեան» կեդրոն

### ՅՈՅԱԸ ՈՒ ԱՊԱԳԱԸ

ԳԻՏԷՔ, ԹԵ ԴՈՒՔ ԱՄԲՈՂԶ ՄԱՐԿՈՒԹԵԱԸ, ԿՈՒ ՈՒ ԲՈՒՐՈՒՄԸԱԿԵՏ ԾԻԵՐՆ ԷՔ, ԻՆԿ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒԴԻՆ՝ ՅՈՅԱԸ ՈՒ ԱՊԱԳԱԸ



Կեանքին ընթացքին մեզմէ իւրաքանչիւրը կ'ունենայ լաւ ու վատ օրեր, յաջող եւ անյաջող օրեր, յաղթանակի ու պարտութեան օրեր։ Ինչ որ ալ ըլլայ ձեր վիճակը, պէտք է գիտնաք, թէ

ձեզմէ իւրաքանչիւրը ունի իրաւունքներ, որոնք ծշդուած են մանուկներու միջազգային իրաւունքներով։ Այդ իրաւունքները հետեւեալներն են.

Ա) Ունենալ անուն, մականուն եւ քաղաքացիութիւն։

Բ) Ունենալ կրօնի եւ խօսքի ապաստութիւն։

Գ) Ծնողներու կամ պետութեան խնամքին տակ ըլլալ՝ բրտութենէ պաշտպանուելով։

Դ) Բժշկական խնամք ստանալու իրաւունք։

Ե) Բաճելի ձեւով ուսումնառութեան եւ կրթութեան իրաւունք։


Զ) Ազգային մշակոյթի, մայրենի լեզուի եւ ազգային կրօնի պահպանման եւ կի-

րարկման իրաւունք։

1915ին այս իրաւունքներուն բոլորն ալ անտեսուեցան Թուրքիոյ մէջ ապրող թուրքերու կողմէ։ Անոնք հայ ծնողներն ու մանուկները հեռացուցին իրենց հայրենիքէն եւ բռնազաղթի ենթարկեցին։ Այս ձեւով անոնք տէր դարձան հայկական դպրոցներուն, հայկական եկեղեցիներուն, տուներուն ու հողին։

Հայերը իրենց հայրենիքէն հեռանալով՝ հաստատուեցան այլ երկիրներու մէջ։ Անոնք բնակութիւն հաստատեցին նաեւ Սուրիոյ եւ Լիբանանի մէջ։ Այս պատճառով ալ Սուրիոյ եւ Լիբանանի մէջ հայերուն թիւը բաւական շատ է։

Ինչու՞ քարտէսին եւ հոն պիտի տեսնես, թէ նախապէս հայերը ուր կ'ապրէին եւ ապա անոնք ուր հաստատուած են։



ملحق أزيك



# «ՀԱՆՃԱՄԻՆ ԱՆՃԱՄՐԱԿՆԵՐԸ»

Սախորթ առնուած ժամադրութեամբ մը, Ծաբաթ, 30 Մարտ 2002ին ուղղուեցանք դէպի համազգայինի «Լեւոն Ծանթ» կեդրոնի երրորդ յարկը, որ սովորական յարկերէն տարբեր էր. երբ թատրոնի բաժանմունքին յատկացուած յարկին դռնէն ներս մտանք այն տպաւորութեան տակն էինք, որ սրահի մը քուլիսներէն դէպի սրահ կ'առաջնորդուէինք. հոն տեսանք Մոսկուայի Քրեմլինը, ջրհոր մը, դիմակներ, ցանկապատ, տարապներ, որոնք այս յարկի վարդարանքին մաս կը կազմէին: Բոն էին նաեւ խումբ մը երեխաներ եւ պատանիներ, որոնք շատ վրադաճ կը թուէին ըլլալ: Քանի մը հոգի երաժշտական գործիքներու վրայ կ'աշխատէր, ուրիշներ տարազ կը փորձէին պրն. Վիգէնին օգնութեամբ, իսկ այս բոլորը կը համադրուէր թատրոնի վարչական մարմինին աննկուն աշխատանքով:

«Պատիկ-Մատիկ»ի խմբագրական կազմի գլխաւոր նպատակն էր պրուցել դերասաններուն հետ: Պրն. Վիգէնի յանձնարարութեամբ պրոյցը տեղի ունեցաւ նախորդ թատերախաղերու մէջ դեր ստանձնած դերասաններուն հետ. Դաւիթ Գալանձեան, Խաժակ Աբէլեան, Կարօ Անտոնեան, Բրայր Պարսումեան, Սարօ Ժամկոչեան, Արին Յովսէփեան, Ռիթա Գույումճեան, Սելին Պարիպեան, Քրիսթին Թիւթիւնճեան, Կարինէ Քեքեճեան, Արման Նոհրա, Բիւլանդ Մկրտիչեան: Յակոբ Նիկոլեանը չկարողացանք հեռացնել երաժշտական գործիքներէն եւ միացնել խմբակին: Նախքան պրոյցը, աղմկարար պատանիներու խումբ մըն էին մեր պրուցակիցները, սակայն այն վայրկեանին,

որ գոցեցինք դուռը այն սենեակին, ուր հաւաքուած էինք, անմիջապէս անդրադարձանք, որ հասուն պատանի-պարմանուհիներու հետ էր մեր գործը:

Բնական էր, որ մեր առաջին հարցումը ըլլար «Արեգ» մանկապատանեկան թատերախումբի կազմութեան մասին:

Սարոն եւ Արինը միասնաբար ըսին, որ «Արեգ»ը կազմուած է 1999ին եւ սկսան թուել «Արեգ»ի ներկայացուցած կտորները. բոլորն ալ Թումանեանի գործերէն էին, 2000ի Մարտին՝ «Կաթիլ մը մեղրը», 2001ի Յունուարին «Բերիաթներու աշխարհը», 2001ի Ապրիլին՝ «Տէրն ու ծառան», 2002ի Յունուարին «Ամբողջ աշխարհին ուրախ նոր Տարի»ն եւ 2002ի Ապրիլին՝ «Հանճարին անճարակները»:

Դաւիթ ներկայացուց պրն. Վիգէնը, անոր մասնագիտական պատրաստութիւնը եւ յաջողութիւնները:

**ԱՐԻՆ.-ՊՐՆ. ՎԻԳԵՆԻՆ ԲԵՏ ԱԾԽԱՏԱՆՔԸ ԲԱԾԵԼԻ Է**

Երկրորդ հարցումը կը վերաբերէր պրն. Վիգէնի կենսագրական գիճերուն:

Դաւիթ ըսաւ, որ պրն. Վիգէնը երեւան ծնած է 1952ին, ան իր դպրոցական կրթութեան հետ նաեւ ստացած է երաժշտական կրթութիւն եւ աւարտած է երեւանի «Փոլիթեքնիք» Ինստիտուտի ծարտարապետական բաժինը:

Ան մեճ փորձառութիւն ձեռք ձգած է թատերական արուեստին մէջ:

Բիւնաս եւ դեկավարած է «Մերթօ» եւ «Արձագանգ» թատրոնները:

1991ին համազգային ճրջանային վարչութեան հովանաւորութեամբ յառաջացուցած է «Արեգ» մանկապատանեկան թատերախումբը:

«Պատիկ-Մատիկ»ի երրորդ հարցումը հետեւեալն էր.



- Ինչպէս կրնաք նկարագրել պրն. Վիգէնի հետ աշխատանքը:

ԱՐԻՆ.- Պրն. Վիգէնի հետ աշխատանքը հաճելի է, թէեւ դժուար, սակայն երբ արդիւնքը տեսնես, ամէն բան կը մոռնաս:

ԲՐԱՅՐ.- Պրն. Վիգէնը խստապահանջ եւ բճախնդիր է:

Դերասաններու տարիքի սահմաններուն մասին Դաւիթ մանրամասն բացատրեց, թէ ընդհանրապէս դերասաններուն տարիքը կը տարուբերի 9էն 16ի միջեւ, սակայն միշտ բացառութիւններ կ'ըլլան: Բիւնասկանը այն է, որ խումբը երկու մասի բաժնուած է: Առաջին խումբը ընդհանրապէս փորձեր են եւ նորեկները, որոնք նախապատրաստական փորձեր կ'ընեն, քալելու, առողջանութեան եւ այլ, իսկ երկրորդ խումբի դերասանները թէ՛ այդ փորձերը կ'ընեն եւ թէ կը պատրաստուին բեմ բարձրանալու:

Այս հանգրուանին մենք վայրկեան մը մոռցանք, որ կը խօսինք 14էն 16 տարեկան պատանիներու հետ, այնքան յստակ էին անոնց պատասխանները. լուրջ, բճախնդիր եւ կեանքով լեցուն:

**ՌԻԹԱ.- ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՊԻՏԻՆ, ՈՐՈՒԵՍՁԻ ՄԵՐ ԱՆԻԱԳՈՅՆԸ ՏԱՆՔ**

«ՊՁՏԻԿ-ՄՁՏԻԿ».- Ինչպէս ընտրեցիք այս պրադումը, դո՞ւք որոշեցիք, թէ ձեր ձողները բաժին ունեցան այս ընտրութեան մէջ:

Բոլորը միացան Բրայրին եւ Դաւիթին ըսելու համար, որ ոեւէ անհատ իր լաւագոյնը կու տայ որեւէ աշխատանքի մէջ, միայն այն ատեն երբ ի՞նք կ'ընտրէ այդ աշխատանքը:

«ՊՁՏԻԿ-ՄՁՏԻԿ».- Ինչ կը պզաք թատերախաղը ներկայացնելու:

ՌԻԹԱ.- Պատասխանատուութիւն, որպէսզի մեր լաւագոյնը տանք:

ՍԱՐՕ.- Ուրախութիւն  
ԲՐԻԶԱՆԴ.- Քիչ մը վախ:

Բակառակ թատրոնի ընթացքին իր համարձակ ձեւերուն, պրոյցի ընթացքին Կարոն պզուց մտիկ կ'ընէր եւ դէմքի շարժումներով իր հաւանութիւնը կու տար ըսածներուն:

Դերերու մասին հարցումին պատասխանելով դերասանները ըսին, որ պատահած է որ իրենցմէ ոմանք դեր չունենան գործերէն մէկուն մէջ, նաեւ պատահած է որ երկու դեր ունենան:

Թէ ինչպէս կարելի է երկու դերերը համադրել հարցումին պատասխանեց Բրայրը, ըսելով որ պարոնը այնպիսի ձեւով կը դասաւորէ, որ մէկ դերը ըլլայ հիմնական, իսկ երկրորդը աւելի թեթեւ դեր մը. այս ձեւով գործը կը դիւրանայ:

«ՊՁՏԻԿ-ՄՁՏԻԿ».- Վստահաբար խումբը ձգողներ եղած են: Ընդհանրապէս թնչ եղած են ձգելու պատճառները:

Բրայրը եւ Դաւիթը բացատրեցին, որ «Արեգ» մանկապատանեկան թատերախումբի մթնոլորտը խմբային եւ հաւաքական աշխատանքի մթնոլորտ է, անոնք՝ որոնք հաւաքական աշխատանքի դիրութիւն չունէին, ձգեցին: Եկրակացութիւն այն էր, որ թատրոնը խմբային աշխատանք է:


Թատրոնի կողքին այլ պրադումի կարելիութեան մասին հարցումին հետեւեալը պատասխանեցին.

Բրայրը ըսաւ, որ շատ դժուար է, որովհետեւ թատրոնը շատ աշխատանք կը պահանջէ: Սակայն նայուածքները ուղղուեցան դէպի Սելինը, որ քանի մը Activity միասին կ'ընէ: Սելին ըսաւ, որ կարելի է դասաւորել: Դժուարութիւնը ներկայացման ամիսն է.





# «ԱՐԱՐԱՏ»



«Իբրև հայ բեմադրիչ միշտ մտածած եմ հայկական Յեղասպանության մասին ժապաւն մը պատրաստելու մասին, ... որովհետեւ հայկական Յեղասպանութիւնը՝ իբրև 20րդ դարու առաջին պանդուխտային ջարդը, հալուադէպօրէն ճանաչում գտած է»:

Այս խօսքերը Ադոմ Էկոյեանինն են: Եգիպտոս ճնած եւ Քանատայի Քոլումպիա շրջանին մէջ մեծցած հայ արուեստագէտ բեմադրիչը իր վկայութեամբ իսկ թէեւ հայկական շրջանակէ հեռու ապրած է, որովհետեւ այդ շրջանին մէջ հայեր չէին ապրեր, սակայն իր պաշտօններուն թարգմանը ու առաջին լեզուն մնացած է հայերէնը:

Էկոյեան բեմադրիչն է բազմաթիւ կարեւոր գործերու: Անոնցմէ ամէնէն նշանաւորը «Էքսթրաթիքս» ժապաւնն է, որ 1994ի Քաննի փառատօնին մրցանակ շահեցաւ: Այլ ժապաւն մը՝ «Տը սուիթ հիրաֆթըր», թեկնածու էր «Օսքար»ի:

Էկոյեանի «Արարատ»ը, որ Միացեալ Նա-

հանգներու եւ Եւրոպայի մէջ հաւանաբար ցուցադրուի աշնան, ժապաւնի մէջ ժապաւն է: Ժապաւնին մէջ ֆրանսացի - ամերիկացի բեմադրիչ մը՝ Էտուրտ Սարոյեան (Ճարլ Ալնաուր) կը պատրաստէ ամերիկահայ գեղանկարիչ Արշիլ Կորքիի մասին ժապաւն մը եւ անոր ճամբով կը պեղէ հայկական Յեղասպանութիւնը:

Ժապաւնին հերոսը 18 տարեկան երիտասարդ մըն է, որ կ'աշխատի իբրև օգնական ժապաւնին արտադրութեան: Երիտասարդը կը փորձէ տեղափոխել Արեւելեան Թուրքիոյ մէջ նկարահանուած ֆիլմ մը, որ կը գտնուի թիթեղէ տուփերու մէջ, սակայն մաքսատան պաշտօնեան կը պահանջէ բանալ տուփերը: Երիտասարդը կը փորձէ բացատրել մաքսատան պաշտօնեային, որ կարելի չէ տուփերը բանալ: Զայն համոզելու համար կը սկսի պատմել ժապաւնին պատմութիւնը, որ հայկական ջարդերուն մասին է: Իր բացատրութեան կ'օգնէ նաեւ իր «սիծրթըլ քամերան», ուր արձանագրուած են երիտասարդին օրագիրը եւ պտոյտը: Երիտասարդը այս քամերային միջոցով կը յաջողի փրկել ժապաւնը: «Արարատ»ը Էկոյեանի երկրորդ ինքնագիր ժապաւնն է, սակայն առաջինը, ուր ան կը պեղէ իր հայկական արմատները:

«Արարատ»ի նկարահանումը անկարելի էր կատարել Արեւմտահայաստանի մէջ: Դետեւաբար



անիկա կատարուած է Թորոնթոյի նաւահանգիստին մօտ: Վերակենդանացուած են վանի փողոցներն ու շուկաները՝ օգտագործելով հին բացիկներ եւ լուսանկարներ: Նկարահանումը սկսելէ երկու շաբաթ ետք հայ գաղութը հրաւիրուած է նկարահանումին վայրը: 100 քանատահայեր երբեմն ընտանեօք, յաճախ ձրի մասնակցած են նկարահանումին:

Էկոյեանի ժապաւնին մէջ դերեր ստանձնած են յայտնի դերասաններ:

«Արարատ»ի նկարահանումը պիտի արժէ շուրջ 15,5 միլիոն տոլար: Կ'ակնկալուի, որ անոր ցուցադրութիւնը տեղի ունենայ 2002ի գարնան՝ Քաննի փառատօնին: Եւ ապա՝ Թորոնթոյի Ճարժապատկերի Փառատօնին:

Թրքական թերթեր խուճապահար հակապղծ են «Արարատ»ի պատրաստութեան լուրին, մանաւանդ որովհետեւ ժապաւնին մէջ դեր ստանձնած են նշանաւոր դերասաններ: Իսկ անոր ցուցումը պիտի կատարէ «Միրամարս» ընկերութիւնը:

Կը յուսանք, որ ժապաւնը ցուցադրուի նաեւ Լիբանանի մէջ:■

## 2002Ի ՄՈՆԻՏԻՆԿԱՆ ԲԱՅՄԱՆ ՄՐՅՈՒՄԸ ՏԵՂԻ Կ՝ՈՒՆԵՆԱՅ ՅԱՌԱՋԻԿԱՅ ՄԱՅԻՍ 31ԻՆ

# ԻՐ ԴԻՏԻ ՇԱՀԻ ԴՐԻԿ ՄՈՆԻՏԻՆԿ ...



Յառաջիկայ ամիս, Մայիս 31ին, Սէուլի մէջ (հարաւային Քորէա) կը սկսի 2002ի ՄՈՆԻՏԻՆԿԱՆ Ֆրանսա - Սենեկալ բացման մրցումով: Մոնտիալի ֆութպոլի պատմութեան մէջ առաջին անգամ ըլլալով է, որ այս մրցաշարքը տեղի կ'ունենայ հիւրընկալ երկու երկիրներու՝ Ճափոնի եւ հարաւային Քորէայի մէջ:

17րդ անգամ ըլլալով տեղի ունենալիք այս Մոնտիալին իրենց մասնակցութիւնը պիտի բերեն 32 խումբեր, բաժնուած ութ խմբակի, իւրաքանչիւրը՝ չորս խումբ:

Մոնտիալին իրենց մասնակցութիւնը բերող 29 խումբերը աւարտական մրցումին իրենց տոմարը ապահոված են վտումի մրցումներ կատարելէ ետք միայն, մինչ երեք խումբեր՝ առանց վտումի մրցումներուն մասնակցելու: Ֆրանսա Մոնտիալին կը մասնակցի իբրև տիտղոսակիր, իսկ Ճափոն եւ հարաւային Քորէա՝ իբրև հիւրընկալ երկիրներ: 32 երկիրներու ֆութպոլի ապ-

գային խումբերը մաս կը կազմեն հետեւեալ ցամաքամասերուն. Եւրոպա, հարաւային Ամերիկա, Ափրիկէ, Կեդրոնական եւ հիւսիսային Ամերիկա եւ Ասիա:

Աւստրալիոյ ցամաքամասը իր մասնակցութիւնը չի բերեր Մոնտիալին, որովհետեւ Աւստրալիոյ ֆութպոլի ազգային խումբը փլէյօֆի մրցումներուն պարտուեցաւ Ուրուկուէյէն:

Ստորեւ՝ Մոնտիալին մասնակցող խումբերը.

- ԵՒՐՈՊԱ
  - Ֆրանսա - Պելժիքա - Խրուսթիա - Դանիա - Անգլիա - Գերմանիա - Այիր - Իտալիա - Լեհաստան - Փորթուգալ - Ռուսիա - Սլովենիա - Սպանիա - Շուէտ - Թուրքիա
  - ԳՆԱՐԱՒԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱ
    - Արժանթին - Պրաչիլ - Էքուատոր - Փարակուէյ - Ուրուկուէյ
    - ԱՓՐԻԿԷ
      - Քամերուն - Նիկերիա - Սենեկալ - հարաւային Ափրիկէ - Թունուզ
      - ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԵՒ ԳՆԱՐԱՒԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱ
        - Քոսթա Ռիքա - Մեքսիքա - Միացեալ Նահանգներ

● ԱՍԻԱ
 Ճափոն - հարաւային Քորէա - Զինաստան - Սէուտական Արաբիա

2002ի Մոնտիալի մրցումները բաժնուած պիտի ըլլան վեց հանգրուանի, հետեւեալ հիմամբ. Ա. հանգրուան, Բ. հանգրուան, քառորդ աւարտական, կիսաւարտական, երրորդ դիրքի համար մրցում եւ աւարտական մրցում:

Այդ մրցումները տեղի պիտի ունենան հաւասարապէս Ճափոնի եւ հարաւային Քորէայի մէջ: Տասը դաշտեր նկատի առնուած են Ճափոնի մէջ, իսկ տասը դաշտեր՝ հարաւային Քորէայի մէջ:

Բացման մրցումը, որ տեղի պիտի ունենայ Սէուլի մէջ (հարաւային Քորէա), կրնայ հիւրընկալել շուրջ 65 հազար համակիր: Իսկ փակման մրցումը, որ տեղի պիտի ունենայ Եոքոհամայի մէջ (Ճափոն), կրնայ հիւրընկալել 73 հազար համակիր:

Նկատի ունենալով, որ իւրաքանչիւր երկրի մէջ տակաւին տեղի կ'ունենան ախոյեանութեան մրցումները, ազգային խումբերուն մարզիչները տակաւին կը մնան սպասողական վիճակի մէջ, վերջ-

նականապէս յայտարարելու համար իրենց խումբը, որ անկասկած կրնայ ենթարկուի կարգ մը փոփոխութիւններու, նկատի ունենալով, որ մարզիկներ կրնան վիրաւորուիլ՝ իրենց ակումբներուն հետ կատարած մրցումներուն ընթացքին:

Փաստօրէն, այդպիսի բան մը կատարուեցաւ Ֆրանսայի ֆութպոլի ազգային խումբին հետ, որուն մէկ մարզիկը՝ Բոպէր Փիրէս, իր ակումբին՝ Արսենալի հետ մրցումի մը ընթացքին վիրաւորուելէ եւ իր ոտքը կտրելէ ետք դուրս մնաց ազգային խումբէն:

Այդ մէկը կրնայ պատահիլ այլ մարզիկներու եւս, նկատի ունենալով, որ ախոյեանութեան մրցումները տակաւին չեն աւարտած եւ որեւէ ժամանակ կրնայ անսպասելի արկած մը պատահիլ:

Նշենք, թէ ցարդ Մոնտիալին կոլ-սքորը կը հանդիսանայ ֆրանսացի ժիւթ ֆոնթէն, որուն մրցանիշը (13 կոլ, 1958ի Մոնտիալին՝ Շուէտ) ցարդ չէ կրցած բարելաւել այլ մարզիկ մը:■



# Expocows



Երոպա, Քանադա եւ Միացեալ Նահանգներ այցելել է ետք. «Կովու ցուցահանդէս»ը Պէյրուս պիտի ժամանէ 1 Օգոստոսէն մինչեւ 3 Նոյեմբեր: «Expo Cows Beirut 2002»ը արուեստը ներկայացնելու հանրային ձեւ մըն է: Իսկական կովու չափով քանդակներու վրայ արուեստագէտներ, աշակերտներ ու մանուկներ պիտի նկարեն ու յարդարեն քանդակ կովերը: Այս ներկուած կովերը պիտի ցուցադրուին քաղաքի կեդրոնի մայթերուն վրայ: Յուշահանդէսին կրնան մասնակցիլ նաեւ նկարչութեան ձիրք ունեցող բոլոր անհատները:


Յուշահանդէսի աւարտին աճուրդով պիտի վաճառուին այս նկարուած կովերը: Բասոյթը պիտի նուիրուի բարեսիրական միութիւններու:■

# Univers d'Albert

Վերջերս քաղաքի կեդրոնին մէջ բացուած է Univers d'Albert մանուկներու կեդրոնը: Երեքէն վեր տարիք ունեցող փոքրերը այս կեդրոնը այցելելով կրնան մասնակցիլ արուեստի տարբեր մարզերու, ինչպէս՝ նկարչութիւն, գունաւորում, տարբեր նիւթերով կաղապարում, ձեռային աշխատանք, եփել ու ցանել:

Ճաքաթավերջին կեդրոնին մէջ տեղի կ'ունենան աճարարներու եւ տիկնիկներու ներկայացումներ եւ պատմասացութիւն:

Future Kids ընկերութեան շնորհիւ փոքրերը կրնան համակարգիչներու ծամբով եւ հաճելի ձեւով ծանօթանալ գիտելիքներու: Միայն այս չէ: Փոքրերը տարուան ընթացքին կը ծանօթանան աշխարհին, ծամբորդելով Ամերիկայի, Ասիոյ, Երոպայի, Աւստրալիոյ եւ Ափրիկէի ցամաքամասերը:■




## ՌԻՍՈՒՑԻՉ ՄԱՐԴԱՄԵՔԵՆԱՆ (ROBOT)

Վերջերս Ամերիկեան Միացեալ Նահանգներու մէջ մարդամեքենայ մը պատրաստուած է, որ ուսուցիչի դեր կը ստանձնէ:

Դասարանին մէջ դասերու ստուգում, խօսակցութիւն, նիւթի բացատրութիւն եւ բերանացի դասերու արժեւորում:

Բետաքրքրականը այն է, որ ուսուցիչ մարդամեքենան չորս կողմէն կը հսկէ դասարանը եւ իր լսատեսողական կարողութիւնը կատարելագործուած է:■



## ԿԱՌՔԵՐ՝ ԱՆԴԱՄԱԼՈՅԾ ՇՈՒՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ

Թայլենտի մէջ անդամալոյճ անասուններու համար յատուկ կառքեր շինուած են: Ընդհանրապէս շուններն են, որ ինքնաշարժի արկածի պատճառով անդամալոյճ կը դառնան: Անասնաբուժական կեդրոն մը այս կառքի շինութեան ձեռնարկած է անձնական նախաձեռնութեամբ մը:■



## «ՀԱՆՃԱՐԻՆ ԱՆՃԱՐԱԿՆԵՐԸ»



ԲՈՒՋԱՆԴ- Դպրոցը երկար ատեն զիս Չալօ կանչեցին:

ԴԱՌԻԹ.- Փոքրիկները մինչեւ հիմա Քաջ Նապար կ'ըսեն ինձի:

«Արեգ» մանկապատանեկան թատրոնին աշխատանքը հսկայական ծիգ կը պահանջէ բոլորէն՝ բեմադրիչէն, դերասաններէն եւ վարչութեանէն: Նման գործ մը կը յաջողի, ինչպէս հաստատեցին պատանիները, հաւաքական եւ խմբային աշխատանքով ու բժախնդրութեամբ: Յատկանիշներ, որոնք ներկայ են «Արեգ» մանկապատանեկան թատերախումբի աշխատանքին մասնակիցներուն մօտ:■

Երբ իսկապէս դժուար կ'ըլլայ այլ բանի մասին մտածելը:

«ՊՁՏԻԿ-ՄՁՏԻԿ».- Ինչպէս կ'ըլլայ ներկայացման կտորի ընտրութիւնը:

Արինը ըսաւ, որ կտորը պարտնը կ'ընտրէ, սակայն կը կարդայ եւ դերերու ընտրութեան մասին կարծիքներ կ'առնէ:

«ՊՁՏԻԿ-ՄՁՏԻԿ».- Ձեր առաջին ներկայացումներէն ետք թնջ եղաւ մարդոց հակադեցութիւնը, երբ ձեզ տեսան:

## ՇԱՌԱՏՆԿՈՒՄ ԿՈՄԻՏԱՍԻ ԱՆՈՒԱՆ ՊԱՆԹԵՈՆՈՆ ՄԵՋ

Ճաքաթ. 6 Ապրիլին, հայաստանի արտաքին գործոց նախարար Վարդան Օսկանեան եւ օտար երկիրներու դեսպանութիւններու, միջազգային կազմակերպութիւններու ներկայացուցիչներ այցելեցին Կոմիտասի անուան պանթոն եւ իբրեւ յարգանքի խորհրդանիշ հայոց մեծամեծներու յիշատակին՝ տնկեցին վաթսուն ճառ:

Այս առիթով, Ամերիկայի դեսպան Ճոն Օրտուէյ Նըբեյ, որ ձեռնարկը կը նկատուի քայլ մը առաջ դէպի ապագայ եւ կը խորհրդանշէ հայաստանի գործակցութիւնը բոլոր այն երկիրներու հետ, որոնց ներկայացուցիչները մասնակցեցան ճառատնկման արարողութեան:■

## ԲԺՈՇԱԸ ՄԱՐՄՆՈՂ ՄԵՋ

Մօտ ապագային պատիկ մեքենայ մը մուտք պիտի գործէ մարմնիդ մէջ՝ վիրաբուժական գործողութիւններ կատարելու համար:

Գիտնականներու վերջին փորձերը ցոյց տուած են, որ վերոյիշեալ փոքր մեքենան պիտի օժանդակէ մասնաւորապէս երակներու վիրաբուժական գործողութեան եւ լէյզըր շողարձակումով բուժումին:■



ԳԻՏԷ՛Ն ԱՊՐԵՕԸ, ԹԵ ԿԵՆՊԱՆՈՒՆԵՐԸ ԲԱՆԻ՛ ՏԱՐԻ ԿԱՊՐԻՆ

Կրիան 100 տարի - Փիղը 40 տարի - Ձին 20 տարի - Առիւնը 15 տարի - Ուղտը 12 տարի - Կատուն 12 տարի



### ԳԻՇԵՐՈՒՄԸ ԹԱԳԱՒՈՐԸ ԿԱՏՈՒՆ

Կատուն մուբեն չի վախնար: Ընդհակառակը, անոր չափազանց լաւ վարգայած գալարանքները անոր կարելիութիւն կու տան դիւրութեամբ շրջելու գիշերը, ինչպէս նաեւ գերելը:



Կաները՝ շնորհիւ իր պէտքերուն:

#### ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄ ԱՋՔԵՐ

Լոյսին տակ չլանալու համար կատուն կը փոքրացնէ բիբերը՝ միայն փոքրիկ ճեղք մը ձգելով:

Մութին մէջ, ան կանոնք առաւելագոյն չափով կը բանայ՝ բռնելու համար լոյսի նուազագոյն ծառագայթ: Այս ձեւով գիշերը կատուն կը տեսնէ այնպէս, ինչպէս օրուան ընթացքին:■

#### ՍՈՒՐ ԱՎԱՆՋ ՄԸ

Կատուն բացառիկ լսողութիւն ունի: Ան կրնայ լսել նոյնիսկ ամէնէն թեթեւ ձայնը: Անոր ականջը կրնայ «որսալ» այն շատ սուր ձայները, զորս մարդ արարածը անկարող է ընկալելու: Երբ մութ գիշերուան մէջ կատուն տասնհինգ մեթր հեռու գտնուող մուկ մը թեթեւ ձայն հանէ, կատուն կը լսէ պայն:

քննեն, պոռնալը: Այս ձեւով կատուն կը վանապանէ առարկային շրջագիծերը եւ ձելը:

Գիշերը կատուն բնաւ տեղ մը չի վարնուիր: Ան կը ճանչնայ վիճք շրջապատող վայրը եւ առար-

#### ԳԻՏԵՒՐ ԹԷ

**Քաստ.**– Կատունները կ'ապրին ամբողջ մոլորակին տարածքին: Անոնց թիւը կը հասնի մօտաւորապէս 23 միլիոնի:

**Կերակուր.**– Կատուն մսակեր է: Ան կ'ուտէ մուկեր, թռչուններ, մողեսներ...

**Ընտանիք.**– Կատուն կատուագիծներու ընտանիքին կը պատկանի: Վագրը, յովապը եւ առիւճը անոր վարմիկներն են:

**Ծանրութիւն.**– Կատուն կը կշռէ մօտաւորապէս 4 քիլո:

#### ԶԳԱՅՈՒՆ ՊԵՒԵՐ

Գիշերը կատուն պէտքերը շատ օգտակար են իրեն համար: Երբ ան կը քսուի սեղանի մը, աթոռի մը կամ ճաղկամանի մը, անոր երկար պիրկ թելերը վայն կը

### ՇԱՐԺԱՊԱՏԿԵՐ

Ներկայիս լիբանանեան շարժապատկերի սրահներուն մէջ կը ցուցադրուին մանուկներու յատուկ երեք հետաքրքրական ու հաճելի ծապաւէններ՝ «Այս էջ», «Մոնսթրոյ, ինք» եւ «Ասթերիքս է Օպելիքս. միսիոն Բլէոփաթր»:

\*\*\*



«Այս էջ».– Կենդանի գճանդկար. քսան հազար տարի առաջ երկիրը ճաճկուած էր սառուով եւ հսկայական կենդանիներ կը գաղթէին դէպի աւելի տաք շրջաններ: Այդ իրարանցումին մէջ տխուր Մէնի Մանթըր եւ իր ընտանիքէն լքուած Սիտ կապիկը կ'ընկերանան եւ կ'որոշեն իր ճնողին վերադարձնել կորսուած մանկիկ մը: Անոնց կը միանայ Տիեկօ վագրը:

\*\*\*

«Մոնսթրոյ, ինք».– Բամակարգչային գճագրութիւն. Տիպնի վերջին արտադրութիւնը: Անշուշտ գիտէք, որ բազմաթիւ երե-

խաներ կը կարծեն որ իրենց անկողիներուն տակը եւ պահարաններուն ետեւը պահոււրտած են հրէշներ եւ կը սոսկան անոնցմէ: Սակայն գիտէ՞ք, թէ այդ «հրէշները» իրենց կարգին կը սարսափին երեխաներէն:


Իսկ ինչ կը պատահի, երբ երկու համակրելի հրէշներ բարեկամանան աղջնակի մը հետ:

\*\*\*



«Ասթերիքս է Օպելիքս. միսիոն Բլէոփաթր».– Ֆրանսական ծապաւէն, ուր երկու հերոսները՝ Ասթերիքսը եւ Օպելիքսը այս անգամ կը մեկնին հին եգիպտոս: Անոնք պիտի օգնեն կղեպատրա թագուհիին գեղեցիկ պալատ մը շինող ճարտարապետին:■

### ՀԱՄԱՅՆՑԻ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ԿԱՅՔԵՐ



[www.kidsfun.4mg.com](http://www.kidsfun.4mg.com)

Լեզու. Արաբերէն

Կայքը ունի վանապան բաժանմունքներ՝ գճագրութեան, մանկական հեքիաթներու բաժին եւ տեղեկութիւններ:



[www.barbie.com](http://www.barbie.com)

Լեզու. Անգլերէն

Կայքը հետաքրքրական է մանաւանդ պարմանուհիներու հագուստի ձեւաւորման, քարտերու տեսակներու տպագրութեան համար:



[www.mathdork.com](http://www.mathdork.com)

Լեզու. Անգլերէն

Թուաբանութեան յատուկ կայք մը՝ նախակրթարանի աշակերտներու համար:

[www.gamebrain.com](http://www.gamebrain.com)

[www.alfy.com](http://www.alfy.com)

Լեզու. Անգլերէն

Երկու կայքերը մանկապատանեկան հետաքրքրական խաղերով օժտուած են:



ԿՆՁ Է ՀԵՔԻԱԹԸ

Վստահ ենք, որ փոքրերուն մեծամասնությունը կը սիրէ հեքիաթ կարդալ կամ ունկնդրել: Բնաւ մտածած էք ինչու: Ծատ հաւանաբար, որովհետեւ հեքիաթին նիւթերը կը գոհացնեն ձեր զգացական ու հոգեբանական կարիքները: Օրինակ՝ հոն կը տեսնէք, թէ ինչպէս յանդուգն ու քաջ անձ մը կը գնահատուի, իսկ վախկոտը՝ կ'անտեսուի: Կը տեսնէք նաեւ, թէ տրուած խոստում մը չյարգելու պարագային ինչպէս պատիժի կ'ենթարկուի խոստումնադրուծը:

Ուրեմն հեքիաթը պատմութիւն մըն է, որուն հերոսները կը ներկայացնեն հակառակ նկարագիր ունեցող անձնաւորութիւններ:

Հեքիաթները հին ժամանակներէ ի վեր գոյութիւն ունեցած են: Անոնք իրարու փոխանցուած ու պատմուած են բերանացի ձեւով: Հեքիաթները իրենց հերոսներուն միջոցով կրնան ներկայացնել հեղինակին կամ պատմողին պատկանած ժողովուրդին կենցաղը, ասանդութիւնները, հաւատալիքները եւ ակնկալիքները:

Հեքիաթները թէ՛ գրողին եւ թէ ունկնդրողին երեւակայութեան թռիչք կու տան: Բոն շատ յաճախ կը տեսնենք մեր առօրեայ կեանքին մէջ անիրականանալի տեսարաններ: Օրինակ՝ պատմութեան մէջ յաճախ կը միջամտեն պարիկները, որովհետեւ այդ ժամբով ունկնդիրներուն կը փոխանցեն, թէ եթէ ծիշդ գործ կը կատարենք, անպայման մեզի օգնող պիտի ըլլայ: Բոն նաեւ կը տեսնենք, թէ ինչպէս կենդանիները հերոսները կը մարմնաւորեն եւ կը խօսին: Այս ձեւով նաեւ անոնք մեզ կը խրատեն, ասնուութիւն եւ բարոյականութիւն կը փոխանցեն: Հեքիաթին հերոսները կրնան ըլլալ նաեւ թզուկներ, իմաստուն կիներ, հսկաներ, կախարդներ, հրէշներ, որոնք կարողութիւն ունին խօսելու կախարդական առարկաներու եւ կախարդուած անհատներու հետ:

Գիտէք թէ ժամանակին երբ օդանաւի գաղափարը գոյութիւն չուներ, մարդիկ հեքիաթին ընդմէջէն կը պատմէին ինքնաթիռ գործին մասին, որ հետագային իրականացաւ՝ օդանաւի ստեղծումով:

Հեքիաթը միայն դաստիարակչական բնոյթ չունի: Ան կարելի է մանուկներուն համար, որովհետեւ


- ա) կը փոխանցէ տեղեկութիւններ,
- բ) կ'ամրապնդէ մեր հաւատքը բարոյական սկզբունքներու հանդէպ,
- գ) Գոհացում կու տայ մեր հոգեբանական եւ զգացական կարիքներուն:

Հեքիաթին ժամանակը չէ: Այդ պատճառով ալ անոնք կը սկսին «կար ու չկար»ով, կամ «ժամանակին»ով: Այս ձեւով հեքիաթը արդէն թեկ կը փոխադրէ երեւակայական աշխարհ մը: Պատմութեան վայրը կրնայ ըլլայ փոքր տարածութիւն ունեցող տեղ մը՝ հիւղակ մը, ծամբայ մը, կամուրջ մը կամ դղեակ մը...:

Հեքիաթները ընդհանրապէս ուրախ եւ լաւ աւարտ մը կ'ունենան: Իսկ ժամանակին պատմողը հեքիաթը կ'աւարտէր «Երկինքէն ինկաւ երեք խնձոր: Աէկը պատմողին, մէկը լսողին եւ մէկն ալ ձեպի»:

Մասնագէտներ կ'ըսեն, թէ այն երեխան, որ օրական հեքիաթ մը կը կարդայ կամ կ'ունկնդրէ, ֆիզիքապէս, բարոյապէս եւ հոգեպէս առողջ կ'ըլլայ:

Թերեւս դուն ալ կրնաս հեքիաթ մը գրել եւ մեզի ուղարկել: Փորձէ՛: ■



ՅՈՎՀԱՆՆԷՍ ԹՈՒՄԱՆԵԱՆ

Անուն Յովհաննէս Թումանեան է: Ծնած եմ 7 Փետրուար 1869ին, հայաստանի հիւսիսային շրջանը, Լոռի գաւառի Դսեղ գիւղը: Բայրս եղած է քահանայ Տէր Թադէոսը, իմ իսկական ուսուցիչս:

Մանկութեանս շատ կը սիրէի ընկերներու հետ նստած մտիկ ընել ընկեր Նեսոյի հետաքրքրական հեքիաթները: Դպրոցին մէջ կիրթ ու ուշիմ աշակերտ ըլլալու բնաւ ճեճ չէի կերած վարժապետս:

Յաճախ եմ վրաստանի մայրաքաղաք Թիֆլիսի Ներսիսեան վարժարանը, սակայն չեմ կրցած աւարտել, որովհետեւ հայրս չէ կրցած հոգալ կրթաթոշակիս ծախսերը:

Ծատ սիրած եմ թատերական ներկայացումները եւ մանաւանդ հայ մեծանուն դերասան Պետրոս Ադամեանի խաղարկութիւնը:

1886ին 17 տարեկան էի, երբ գրեցի «Շունն ու կատուն»: Մեծերն ու փոքրերը այնքան սիրեցին պատմութիւնը, որ փողոցէն անցած ատենս կ'ըսէին «Չունն ու կատուն» եկաւ:

Այս գործէն ետք հեքիաթագիր դարձայ: Այնքան սիրած եմ փոքրերը, որ վիրենք ուրախացնելու համար գրած եմ «Կաթիլ մը մեղր»ը, «Քարեկենդան»ը, «Անբան հուրին», «Կիկոսի մահը», «Տէրն ու ծառան», «Սուտիկ որսկանը»,

«Ոսկու կարասը», «Անյաղթ արջորդ», «Քաջն Նապար»ը, եւ ուրիշ շատ հեքիաթներ:

Քայքայ չկարծէք, թէ միայն փոքրերուն համար գրած եմ: Մեծերուն համար ալ գրած եմ բանաստեղծութիւններ, «Գիրք»ը եւ «Անուշ»ը, որ օփերայի վերածուած է:

Մեռած եմ Մոսկուա, 1923ին: Մարմինս թաղուած է Թիֆլիսի Ս. Գէորգ եկեղեցւոյ մէջ՝ իսկ սիրտս՝ Երեւան:

ՇՈՒՆՆ ՈՒ ԿԱՏՈՒՆ

Ժամանակին կատուն ճոն՝ էր, Շունն ալ գլխուն գոլակ չուներ, Քայքայ դուրսէն ուր ծանկեր էր ան, Ալ դժգոհ, մորթ մը գառան: Եկաւ օր մը ծմբոնամուտին, Գտած մորթը բերաւ կատուին:

– Բարի յաջողում, վարպետ փիսօ, Գլուխս մրսեց, ի սէր Աստուծոյ, Ա՛ն այս մորթը, ինձի համար Գոլակ կարէ գլխուս յարմար: Վարձիդ համար դուն հոգ չընես, Միայն թէ շատ չուշացնես:

– Աչքիս վրայ, Քուչի քաւոր, Գոլակ մըն է, մուշտակ չէ որ, Բու թանկագին խաթեր համար, Ուրբաթ օրը հրամէ տար: Իսկ դրամը, Է, ամօթ է, Մեր մէջ խօսին ասելորդ է, Ի՞նչ մեճ բան է, այ օրհնուած, Միայն միայն մէկ գոլակի վարձ:

Առտուն կանուխ Ուրբաթ օրը, Գլուխը բաց մեր քաւորը Ծանր-ճանր փողոցն անցաւ, կատուի շեմքին տնկուեցաւ: – Վարպետն ո՛ւր է, գոլակս դուր է: – Կեցի՛ր, կու գայ՝ ուրտեղ որ է:

Կատուն եկաւ մուշտակ հագած, Տեսաւ շանը, շատ վարմացած Ինքնիրենը քիչ մրթմրթաց, Յաճախորդին վրայ թընդաց: – Յուրտը տարա՛ւ, վայ, տնաջէն, Չես թողուր որ շունչ քաշեն, Դիրին բան չէ, ա՛յ, ես նոր եմ

Կտրեր, ձեւեր, որ դեռ կարեն:

– Դէ, օրհնուած, այդպէս ըսէ, Քարկանալդ ալ ինչքս է, Վարձ եմ տուեր, շուտով հասցո՛ւր, Թէ չէ ըսէ՛ վա՛ղը եկուր: Բան խօսք կու տաս, հա՛մ չես կարեր, հա՛մ ալ վրաս կը պոռաս դեռ, հա՛մ, հա՛մ, հա՛մ, հա՛մ, Քանի անգամ երթամ ու գամ Ըսաւ քուչին ու սրտնեղած՝ Վերադարձաւ գլուխը բաց:



Եկաւ նորէն, դարձեալ չի կար, Այս անգամը դպան իրար, Ալ անպատիւ, անարգ խօսքեր, Ալ հօր ու մօր, ալ հին ու նոր, Ալ գող փիսօ, ալ ծաղատ շո՛ւն Ալ ի՞նչ խօսքեր, ի՞նչ վայնասուն Գործը հասաւ դատաւորին, Մինչեւ շունը տարին բերին, Բանը բանէն արդէն անցաւ, Վարպետ կատուն անյայտացաւ:

Այն օրուրէն մինչեւ այսօր Շունն այդ բանը չէ մոռացած, Իր մտքին մէջն է դեռ պահած: Ուրտեղ կատուին որ պատահի, Իսկոյն վրան պիտի նետուի, Վրան նետուի, վրան հաջէ Ու իր մորթը ետ պահանջէ: Իսկ սեւերես կատուն յանկարծ, ետ կը դառնայ ու բարկացած, կը փշտացնէ, իբր նոր է Կտրեր, ձեւեր, որ դեռ կարէ:

\* դերձակ



# ԺԱՄԱՆՅ

## ԱՍՍՈՒԱՆ ԴԱՐՅՈՒՄԸ

Կրնան մասնակցիլ Յ՛ն 12 տարեկան աշակերտները: Կտրօնը ամբողջացնել էտք հասցնել «ԱԶԴԱԿ»ի խմբագրատուն:

### ԴԱՐՅԱՐԱՆ ԽԻՒ 1

1) Ռվ է «Արարատ» ֆիլմին բեմադրիչը:

2) Ինչպիսիք պատմություններ գրած է Յովհաննէս Թումանեան:

3) Ռվ է բեմադրիչը «հանճարին անճարակները» թատերախաղին:

Անուն Մականուն

Վարժարան

Ծննդեան թուական

հեռաձայնի թիւ

# ԺԱՄԱՆՅ



5	2	1	9	10	12	26	27
3	2	3	8	9	11	25	28
3	4	7	9	12	24	24	29
4	6	5	13	23	22	30	31
6	5	14	14	21	22	32	32
7	15	16	19	20	21	30	33
16	17	18	18	20	35	34	33

Կրնա՞ս տուփիկ 1էն տուփիկ 35 հասնիլ, թիւերուն շարքը յարգելով

	1	
		7
4		2



Կրնա՞ս ամբողջացնել պարապ տուփիկները: Իւրաքանչիւր հորիզոնական եւ ուղղահայեաց շարքի գումարը հաւասար պէտք է ըլլայ 15ի:

«Պլտիկ-Մլտիկ»ի ժամանցի բաժինին պատասխանները կրնաք գտնել ճարաթ օրուան «ԱԶԴԱԿ»ի Մանկապատանեկան էջին մէջ:

# ԺՊԻՏ

ՈՒՍՈՒՑԻՉԸ.- Ռր կենսանիւթերը գոյութիւն ունին ստիին մէջ:  
ԱՃԱԿԵՐՏԸ.- Ս. Ո. եւ Խ. կենսանիւթերը:

\*\*\*

Ջուակը տեսաւ, որ հայրը նամակ կը գրէ, հարցուց.

- Ի՞նչ կը գրես, հայրի՛կ:
- Բօրեղբօրդ նամակ մը:
- Սակայն գրել չես գիտեր:
- Այո՛, ինքն ալ կարդալ չի գիտեր:

\*\*\*

ՊՋՏԻԿԸ.- հայրի՛կ, կրնա՞ս մութին մէջ գրել:

ԴԱՅՐԸ.- Կը փորձեմ:


ՊՋՏԻԿԸ.- Լոյսը պիտի մարեմ, որ վիճակացոյցս ստորագրես:

# ՀԱՆԵՆՈՒԿ

Ամրան հագուած,  
Ձմրան մերկ,  
Մէկ ոտք ունի,  
հազար ձեռք:

\*\*\*

Ես ճնելուս պէս կը մեռնիմ, բայց կարծատել կեանքիս ծամբան կ'ըլլայ միշտ երկար, աղմկալի եւ լուսաւոր: Ռվ եմ ես:



Կրնա՞ս օգնել «Պլտիկ-Մլտիկ»ին ճաղիկներուն հասցնող ծամբան գտնելու համար:

ՎԻՊԵՆ ԿԵՊԵՆԵԱՆ - ՆԱԽ Դ.  
(հայ կաթ. գ. հարպոյեանի Ս. Խաչ վարժարան)



# ՄԻՋԴՊՐՈՑԱԿԱՆ

«Պատիկ - Մատիկ»-ի խմբագրական կազմը հրաւիրեց լիբանանահայ բոլոր վարժարաններէն ներկայացուցիչներ հանդիպումի մը, ուր քննարկուեցաւ միջդպրոցական էջի բովանդակութիւնը: Որոշուեցաւ որ մանկապատանեկան թերթի անունը առաջարկուի մանկապարտէզի եւ նախակրթարանի աշակերտներուն կողմէ: Կարճ ժամանակամիջոցի մը ընթացքին խմբագրութեան հասան հարիւրէ աւելի անուններ:

Խմբագրական կազմը ստացած անուններէն ընտրեց «Պատիկ-Մատիկ» անունը, որ առաջարկած էր Ազգ. եղիշէ Մանուկեան վարժարանէն Աշոտ Բագրատունի:

Միջդպրոցական էջի բովանդակութեան գծով նկատի առած ենք երեք տարբեր մարզեր՝ գծագրութիւն, տեղեկատուութիւն եւ ինքնագիր գրութիւն: «Պատիկ-Մատիկ»-ի խմբագրական կազմը արդէն ստացած է բազմաթիւ գծագրութիւններ ու գրութիւններ եւ ինչու չէ կարելի սահմաններու մէջ պարբերաբար տեղ պիտի ընծայէ բոլորին, իսկ գծագրութիւններու պարագային կը նախատեսուի ցուցահանդէս մը կազմակերպել: Ծնորհակալութիւն բոլոր մասնակցողներուն եւ կը սպասենք բոլոր վարժարաններու մասնակցութիւնը:

## ԷՇԸ ՈՒ ԲԷՇԸ

Բէշը էշին վրայ նստած կ'երթար բէշաստան (պահարան) յանկարճ ճամբան էշը յամառեցաւ եւ ուզեց (ախոռ) էշաստան երթալ ու կռիւը սկսաւ:

էշը ըսաւ էշաստան (ախոռ)

բէշը ըսաւ բէշաստան (պահարան)

էշը ըսաւ բէշին. բէշիկ ջան բէշաստանը ինչ պիտի ընես կախուիս կախիչէն, գոնէ էշաստանին մէջ խոտ կ'ուտես, իսկ եթէ ուզես դուրս ելլել կրնաս ծայռէ ծայռ ցատկել, վազվզել դաշտին մէջ ու կ'ուրախանաս:

Բէշը պատասխանեց. իշուկ ջան ես չեմ սիրեր խոտ ուտել. ոչ ալ ծայռէ ծայռ ցատկել, ո՛չ ալ դաշտին մէջ վազել միայն կը սիրեմ օճառի մասածը եւ արեւի լոզանքը:

էշը ըսաւ, եթէ անանկ է, դուն բէշաստան, իսկ ես էշաստան՝ պէտք է երթալ դատաստան:

Ու հասաւ դատի ժամը. կախիչը եղաւ դատաւոր

ու հարցուց.- Ինչ պատահեցաւ ձեր երկուքին. բէշը ըսաւ. առտու կանուխ ժամը վեցին տէրս արթնցաւ վիս փնտռեց բացաւ բէշաստանը՝ առաջին կախիչ... երկրորդ կախիչը... երրորդ ու վիս չգտաւ անկողինին վրայ, անկողինին տակը, սեղանին վրայ տակը, աթոռին վրայ, տակը ու վիս չգտաւ: Տէրս հարցուց մօրը մամ բէշս տեսա՞ր, մայրը ըսաւ.- Այո իշուկի մը վրայ նստած կ'երթար:

Կախիչ դատաւոր վիզէդ կախում ինչ կ'ըլլայ ինձի ազատէ այս էշէն ու վիս դրկէ բէշաստան:

Դատաւորը ըսաւ.- Ոչ որ կրնայ խաբել ու նեղացնել միւսին ամէն որ իր տեղը կ'երթայ:

Ուրեմն էշը էշաստան, իսկ բէշը բէշաստան եւ այս ձեռով բէշը կախուեցաւ կախիչէն.- մտաւ բէշաստան. տէրը ուրախացաւ ու կոկիկութիւն խոստացաւ մօրը, իսկ մայրիկը չբարկացաւ:

ՄՈՒՐԱՏԵԱՆ ՆՈՒՒՐ 4րդ դասարան (Ս. Ազնէս Վարժարան)

## ԱՅՅԵՆՈՒԹԻՒՆ ԼԻԲԱՆԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԹԱՆԳԱՐԱՆ

Ուրբաթ, 22 Մարտ 2002ին, Թրատի հայ Աւետարանական վարժարանի նախակրթարանի աշակերտները, իրենց տնօրէնուհի՝ տիկին Վերա Սվածեանի եւ ուսուցչուհիներուն հսկողութեամբ կատարեցին պտոյտ մը՝ այցելելով Լիբանանի Ազգային թանգարանը:■



Հերմինէ Նիրբէթլեան (10 տարեկան) - Հայ Կաթողիկէ Մեսրոպեան վարժարան

## ԱՅՅԵՆՈՒԹԻՒՆ ՊԻՔՏԱՅԱՅԻ ՅՈՒՇԱՐՁԱՆ

Գինգշաբթի, 11 Ապրիլ 2002ին, Ազգային Աքսոր Գասարճեան վարժարանի մանկապարտէզը Ապրիլ 24ի առիթով այցելեց Պիքճայայի Յուշարձանը:■



## ՄԵԾ ԵՂԵՌԻՆԸ

Գարնանային խաղաղ գիշեր մը, երբ քնացած էի, նշմարեցի լոյսի թեթեւ նշոյլ մը: Մեծ մայրիկս էր, որ գրասենեակիս մէկ կողմը նստած, մոմ մը վարած երկինք նայելով կ'արտասուէր ու կ'աղօթէր:

Ծուտով ելայ մահճակալէս եւ իրեն մօտեցայ: Բարցուցի, թէ ինչու կու լար, սակայն ան չուզեց պատասխանել. անգամ մը ես հարցուցի եւ այս անգամ լացը զսպելով սկսաւ պատմել:

«1915 Ապրիլ 24ին չորս տարեկան էի, մեր բակը ազգականներով եւ դրացիներով աչք խրուկ կը խաղայինք, յանկարճ կրակոցի ձայն լսեցինք: Թուրքերն էին: Ծտապով հայրս ու մայրս դուրս վազեցին, որպէսզի կեանքս փրկեն, սակայն երկուքով գլորուեցան կառքին տակ: Ես վազեցի հօրս ու մօրս դիակները փնտռելու, երբ թուրքերը եկան ողջ անձերը ստուգելու եւ ես գտնուելով դիակներուն տակ, ազատեցայ:

1915 Ապրիլ 24ին թուրքերը ուզեցին ոչնչացնել հայերը եւ հայաստան անունը վերջնականապէս բնաջնջել, սակայն չյաջողեցան: Փաստը՝ մենք ենք, այսօր մենք ողջ ենք, հայերէն կը խօսինք, կը գրենք, կը կարդանք եւ վստահ են, որ հայ պիտի մնանք:

ՆԱՅԻՐԻ ԱՌԱԳԵԱՆ

Սրբոյ Քառասնից Մանկանց վարժարան  
Զ. դասարան



Ալին Դաւիթեան (Մասնաւոր դասարան) - ԶԱՀԼ